ՀՈՒՇԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարությունը, այսուհետ՝ Կողմեր.

ընդունելով երկու երկրների արդարադատության նախարարությունների միջև համագործակցության կարևորությունը.

հիմք ընդունելով երկու երկրների միջև համագործակցության դրական փորձը և այն հետագայում բարելավելու, ինչպես նաև փոխըմբռնումն ու բարեկամական համագործակցությունն ամրապնդելու անհրաժեշտությունը.

ձգտելով հաստատել սերտ գործընկերային հարաբերություններ երկու պետությունների արդարադատության նախարարությունների ենթակայության և վերահսկողության ներքո գործող մարմինների և հաստատությունների միջև.

մտադրություն ունենալով աջակցելու երկու պետություններում իրականացվելիք դատահիրավական բարեփոխումներին, ներպետական օրենսդրությունը համապատասխանեցնելու միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին, նպաստելու երկու երկրների ներպետոկան օրենսդրության ներդաշնակեցմանը, համագործակցությունը բացառապես գործնական հիմքերի վրա կառուցելու և այն բարելավելու, Կողմերի կադրային կարողությունները միասնական ծրագրերի իրագործման շրջանակներում առավել արդյունավետ օգտագործելու, Կողմերի տեխնիկական և կազմակերպական հնարավորություններն ընդհանուր նպատակներին ծառայեցնելու.

համաձայնվեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Կողմերը, հաշվի առնելով իրենց կարողությունները, կընդլայնեն համագործակցությունը հետևյալ ուղղություններով՝

1) Կողմերի արդարադատության նախարարությունների ենթակայության և վերահսկողության ներքո գործող մարմինների և հաստատությունների միջև գործընկերային կապերի հաստատում.

2) քրեական, քաղաքացիական, վարչական և համապատասխան դատավարական իրավունքի վերաբերյալ օրինագծերի մշակման, ինչպես նաև այդ օրինագծերի գնահատման գործում փոխադարձ օգնություն.

3) երկուստեք հետաքրքրություն ներկայացնող իրավական ակտերի, մասնավորապես միջազգային պայմանագրերի նախագծերի առնչությամբ Կողմերի եզրակացությունների և խորհրդատվությունների հայցում.

4) իրավական ակտերի նախագծերի համատեղ մշակման նպատակով աշխատանքային խմբերի ձևավորում.

5) Կողմերի աշխատակիցների համատեղ վերապատրաստման ծրագրերի ներդնում.

6) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Իրավաբանական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից իրականացվող վերապատրաստման ծրագրերին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարության, ԴԱՀԿ ծառայության և քրեակատարողական համակարգի աշխատակիցների մասնակցություն: Վերապատրաստման ծրագրերի ուղղությամբ Հայաստանի Հանրապետության նոտարական պալատի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարության ՔԿԱԳ և նոտարիատի գործակալության միջև համագործակցություն.

7) Ոլորտի աշխատողների և մասնագետների մասնագիտական որակավորման հետագա բարձրացման և վերապատրաստման ուղղությամբ համատեղ միջոցառումների (գիտաժողովներ, դասախոսություններ, գործնական հանդիպումներ) կազմակերպում և անցկացում՝ Հայաստանի Հանրապետությունում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում.

8) երկու պետությունների արդարադատության նախարարությունների ենթակայության և վերահսկողության ներքո գործող մարմինների և հաստատությունների կազմակերպմանն ու գործունեությանը ծանոթանալու նպատակով Կողմերի պատվիրակությունների փոխայցելություններ: Արդարադատության նախարարությունների ենթակայության և վերահսկողության ներքո գործող մարմինների և հաստատությունների գործունեության վերաբերյալ փորձի փոխանակում, այդ թվում՝ համապատասխան մասնագետների հետ խորհրդակցությունների և ուսումնասիրությունների միջոցով.

9) համապատասխան հարցման դեպքում քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման մասին վկայականների կրկնօրինակների և պետական գրանցման համար հիմք հանդիսացող այլ փաստաթղթերի անվճար տրամադրում.

10) համագործակցություն դատական փորձաքննությունների ոլորտում, մասնավորապես փորձագետների վերապատրաստման ուղղությամբ համատեղ միջոցառումների իրականացում: Աջակցություն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության «Դատական փորձաքննությունների լաբորատորիա» ՊՈԱԿ-ի տեխնիկական և մասնագիտական հագեցվածությանը:

11) Հայաստանի Հանրապետության «Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ-ի կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատավորների և դատախազների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման, դատավորների, դատախազների, դատական ծառայողների, դատական կարգադրիչների և դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց վերապատրաստման և հատուկ ուսուցման անցկացում՝ ՊՈԱԿ-ի և ԼՂՀ արդարադատության նախարարության միջև սահմանված ծավալների սահմաններում

12) հանրային ծառայությունները «մեկ պատուհան» սկզբունքով մատուցմանը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրմանը աջակցություն, իրավական

տեղեկատվական համակարգի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքների խորացում.

13) Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի, Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային որոշումների ուսումնահիրությունների համատեղ կազմակերպում և դրանց վերաբերյալ ուսուցողական ծրագրերին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ներկայացուցիչների մասնակցություն.

14) օտարերկրյա պետություններում կազմակերպվող միջազգային գիտաժողովներին, կոնֆերանսներին, ուսումնական այցելությունների հնարավորության դեպքում դեպքում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարության ներկայացուցիչների մասնակցության ապահովում հայկական կողմից.

Վերոհիշյալ միջոցառումների իրականացման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով Կողմերը պարտավորվում են դրանց իրագործման բնագավառում էապես ընդլայնել էլեկտրոնային համակարգերի ներդրման ծավալները:

Հոդված 2

Կողմերն իրականացնում են տեղեկատվության փոխանակում ազգային օրենսդրության և արդարադատության նախարարությունների ենթակայության և վերահսկողության ներքո գործող մարմինների և հաստատությունների գործունեության մասին փորձի փոխանակման, ազգային իրավական համակարգերի տեղեկատվության թվայնացման և միասնականացման բնագավառում, ինչպես նաև այդպիսի տեղեկատվություն պարունակող համակարգերի ստեղծման և հանրային կամ էլեկտրոնային հատուկ ուղիներով դեպի այդ համակարգեր մուտքի թույլտվություն կազմակերպելու գործում:

Տեղեկատվության փոխանակումն իրականացվում է Կողմերի ներպետական օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 3

Համագործակցության գծով համատեղ միջոցառումները ֆինանսավորելիս՝ Կողմերն առաջնորդվում են օրենսդրությամբ սահմանված նորմերով, այդ թվում ոչ պետական միջոցների ներգրավման հնարավորությունը չբացառելով:

Հոդված 4

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Հուշագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ: Փոփոխությունները և լրացումները ձևակերպվում են արձանագրությամբ, որն ուժի մեջ է մտնում սույն Հուշագրի ուժի մեջ մտնելու համար սահմանված կարգով և հանդիսանում է դրա անբաժանելի մասը:

Հոդված 5

Սույն Հուշագրի կատարման կազմակերպական աշխատանքների համար պատասխանատու են՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից՝ միջազգային իրավական համագործակցության ոլորտում համակարգման պարտականություններ ունեցող նախարարի տեղակալը.

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալը:

Հոդված 6

Սույն Հուշագիրը կնքվում է անորոշ ժամկետով և ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Սույն Հուշագրի ուժի մեջ մտնելուց հետո ուժը կորցրած ճանաչել Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունների արդարադատության նախարարությունների միջև 2010թ. հունիսի 18-ին կնքված փոխընբռնման հուշագիրը:

Սույն Հուշագրի գործողությունը դադարում է Կողմերից մեկի՝ այդպիսի մտադրության մասին գրավոր ծանուցումը ստանալու օրվանից երեք ամիս հետո:

Կատարված է Ստեփանակերտ քաղաքում, 2014 թվականի հունիսի 25-ին, երկու բնօրինակով, հայերեն լեզվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ	ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
ՆԱԽԱՐԱՐ	ՆԱԽԱՐԱՐ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ	ԱՐԱՐԱՏ ԴԱՆԻԵԼՅԱՆ